

# ՍԱՂՄՈՍ 127

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Բարգավաճումը ՏԻՐՈՋԻՑ Է	ՏԻՐՈՋ հետ աշխատելն ու բարգավաճելը	Ապահով տունը և մեծ ընտանիքը ՏԻՐՈՋ պարզևներն են (Իմաստասի- րական Մաղմոս)	Աստծո բարության գովք	Վստահություն նախախնամությանը
Բարգավաճումը ՏԻՐՈՋԻՑ Է				
<u>MT ներածություն</u> Սողոմոնի աստիճանների երգը				
127:1-2	127:1-2	127:1-2	127:1-2	127:1 127:2
127:3-5	127:3-5	127:3-5	127:3-5	127:3-4 127:5

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)**  
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

**ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ** – Սա հավանաբար մակագրության սխալական լինելու լավ օրինակ է, որը հիմնված է միայն «տան» հրեական ավանդական մեկնաբանության վրա, որը նկատի ունի տաճարը:

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p><b>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 127:1-2</b></p> <p><sup>1</sup>Եթե ՏԵՐԸ չլինի տունը, զուր են աշխատում այն շինողները: Եթե ՏԵՐԸ չպահպանի քաղաքը, զուր տեղն են հսկում պահապանները: <sup>2</sup>Դատարկ բան է ձեր կողմից վաղ արթնանալը, Ուշ հանգչելը ու ցավով հաց ուտելը. Քանի որ Նա Իր սիրելին քուն է տալիս:</p>
---

**127:1-2** Այս պարբերությունը հաստատում է ՅԱՀՎԵԻ ինքնիշխանությունը: Նա ցանկացածն ապահով է: ՅԱՀՎԵՆ Իսրայելի համար ունեի աստվածաբանական, գլոբալ նպատակ: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

«Տուն» տերմինը (Մաղմ. 127:1) և «Իր սիրելին» (Մաղմ. 127:2) Իսրայել ազգի համար պատկերավոր լեզու է, որոնք ձևավորվել են Նահապետներին տրված ՅԱՀՎԵԻ հատուկ խոստումներից (թե՛

երկիրը և թե՛ սերունդը, այսինքն՝ Ծննդոց 12:1-3, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ:

Ուշադրություն դարձրեք «մինչև որ ՏԵՐԸ չլինի տունը. . .» և «մինչև որ ՏԵՐԸ չպահպանի քաղաքը» արտահայտությունների միջև զուգահեռականությունը: Այս պարբերությունը կառուցված է՝

1. զուգահեռականության վրա
2. հնչյունախաղերի վրա (Շ)
  - ա. «զուր տեղը», Սաղմ. 127:1 (երկու անգամ), 2 – BDB 996 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉՈՒՐ, ԴԱՏԱՐԿ, ՈՒՆԱՅՆ)
  - բ. հսկում է, Սաղմ. 127:1 – BDB 1036
  - գ. պահպան, Սաղմ. 127:1 – BDB 1036
  - դ. արթուն մնալ, Սաղմ. 127:1 – BDB 1052
  - ե. վաղ արթնանալ, Սաղմ. 127:2 – BDB 1014
  - զ. ուշ հանգչել, Սաղմ. 127:2 – BDB 442, ըՄ՝
  - է. քնել, Սաղմ. 127:2 – BDB 446, ՏՆՇ, որը հանդիպում է միայն այստեղ ՀԿ-ում (AB, էջ՝ 225, առաջարկում է, որ հնարավոր է սա արարերեն «բարգավաճում» բառն է, որն այս համատեքստին համապատասխան է, սակայն, «քնել» բառը նույնպես լավ է համապատասխանում այս համատեքստին):

**127:2** Մարդկային ջանքերն առանց Աստծո անօգուտ են, ապարդյուն և ժամանակավոր (տես՝ Հովի. 15:5): Գոյություն ունեն երեք ԴԵՐԲԱՅՆԵՐ և երկու ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴԻՅԱԼՆԵՐ, որոնք ձևավորում են զուգահեռ արտահայտություններ:

1. վաղ արթնանալ
2. ուշ հանգչել
3. ցավով հաց ուտել

Հետաքրքիր է, որ AB (էջ՝ 223) #3 դիտարկում է որպես կռապաշտության անդրադարձ և մեջբերում՝

1. Չերոմի գրառումները (Juxta Helraeos) որպես հաստատող խոսք
2. Սաղմ. 106:36,37 և հավանաբար Սաղմ. 139:24, որոնք միևնույն հիմնական արմատից են (BDB 780 I և BDB 781)
3. Սակայն ցավով աշխատանքը կարծես թե ավելի հարմար զուգահեռ է #1 և #2-ի համար լարված մարդկային ջանքերով սպասված արդյունքի հասնելու նկարագրության հարցում:

❖ «**Նրա սիրելին**» Մա վերաբերում է Իսրայելին (տես՝ 2 Օրինաց 33:12, Սաղմ. 60:5, 108:6, Եսայի 5:1, Երեմ. 11:14, 12:7): Քանի որ MT և DSS-ի ներածություններում առկա է «Սողոմոն» անվանումը, որոշ աստվածաբաններ կապ են տեսնում 2 Թագ. 12:25-ի միջև, որտեղ Սողոմոնը կոչվում է «Հեղիդահ» (այսինքն՝ *Shih* սիրելին) Նաթանի կողմից:

❖ «**քնել**» Քունը Աստծուց պարզև է հավատարիմ հետևորդներին, թե՛ հավաքական (Իսրայել ազգը) և թե՛ անհատական իմաստով:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 127:3-5**

<sup>3</sup>Ահա, երեխաները ՏԻՐՈՉ ժառանգությունն են.  
Որովայնի պտուղը Նրա պարզևն է:  
<sup>4</sup>Ինչպես որ նետերն են զորավոր մարդու ձեռքին,  
Այդպես են երիտասարդ որդիները:  
<sup>5</sup>Երանի՛ այն մարդուն, որ իր կապարճը լցրել է նրանցով.  
Նրանք չեն ամաչելու, այլ թշնամիների հետ խոսելու են դարպասի:

**127:3-5** Այս պարբերությունը առաջին հայացքից թվում է կապ չունի Սաղմ. 127:1-2-ի հետ, սակայն Սաղմոսի շեշտադրությունը որպես մի ամբողջություն Աստծո ակտիվ ներգրավվածությունն է

Իսրայել ազգի կյանքում: Այս Սաղմոսը ուղղված է գործող թագավորին: Որևէ ազգ այնքանով է ամուր, որքան իր ընտանիքի կառույցը:

Առողջ երեխաները Դևտ. 26:9-ի և 2 Օրինաց 7:13, 28:4, 30:5-ի «օրհնության» բաժնի մասն են կազմում: Այն համարվում էր Աստծո հետ առողջ ուխտի փոխհարաբերության նշան: Հիշե՛ք, որ Նա է այն Մեկը, որ պատվիրեց մարդկության «անել ու բազմանալ» (տես՝ Ծննդ. 2:27-28, 9:1,7):

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԱՐԴՈՒ ՍԵՔՍՈՒԱԼՈՒԹՅՈՒՆԸ

**127:3**

**NASB, TEV, REB  
NKJV, NRSV, LXX  
NJB  
JPSOA**

**«ՏԻՐՈՉ պարզևր»  
«ՏԻՐՈՉԻՑ ժառանգություն»  
«Յահվեից ծննդյան իրավունք»  
«ՏԻՐՈՉ տվածը»**

Այս բառը (BDB 635) հիմնականում նշանակում է ժառանգություն (NIDOTTE, հատոր 3, էջ՝ 77) կամ «ունեցվածք» կամ «սեփականություն»:

1. անձի ժառանգությունը – Ծննդ. 31:14, Թվոց 27:7,8,9,10,11, 36:3,8, Սաղմ. 37:18
2. Իսրայելի ժառանգությունը – 2 Օրինաց 4:21, 15:4, 19:10, 20:16, 24:4, 25:19, 26:1, Եսայի 54:17
3. վիճակ կամ բաժին – Հոր 20:29, 27:13, 31:2

Այս Սաղմոսը կարելի է մեկնաբանել որպես սահմանված ճշմարտություն՝

1. անհատի համար (#1 վերը նշված)
2. Իսրայելի թագավորի և, հետևաբար ազգի համար (#2 վերը նշված)

Ես կարծում եմ, որ #2-ը այս Սաղմոսին ավելի հարմար է:

**127:5** Սաղմոսի այս տողը շեշտադրում է ուժեղ բնակչություն (կամ ցեղ), որը կարող է պաշտպանվել՝

1. իրենց Աստծո շնորհիվ
2. իրենց աստվածատուր բնակչության շնորհիվ

Հնարավոր է, որ այս համարը Դավթի սերնդից Թագավորի դինաստիան երաշխավորելու համար է:

❖ **«նրանք չեն ամաչելու»** Թագավորի դինաստիայի համար խոստման այս համատեքստում, կարծում եմ «ամաչելը» վերաբերում է ռազմական պարտությանը: «Ամաչել» բառի համար տես Սաղմոս 119:6-ի գրառումը:

❖ **«դարպասի մոտ»** Սա օրենքի, առևտրի և սոցիալական հաղորդակցության վայրն էր:

AB (էջ՝ 224) առաջարկում է մեկ այլ տարբերակ կապված Սաղմոսի այս վերջին տողի հետ: Հիմնական եբրայական արտահայտությունը կարող է վերաբերել պատերազմի տեսարանին, որտեղ թշնամին պարտվել է: Թարգմանությունն այսպիսի տեսք կունենա՝ «այլ իր թշնամուն դարպասներից հետ կքշի»:

### **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞ւմ է ուղղված այս Սաղմոսը:
2. Ո՞վ է Սաղմոս 127:2-ի «սիրելին»:
3. Սահմանե՛ք այս համատեքստում «ամաչել» բառը:
4. Սաղմոսի վերջին տեղը պետք է հասկանալ ըստ այն հանգամանքի, թե ում է ուղղված խոսքը, ինչո՞ւ: